

Պ

Տրիբունը կ'աշխատէր ապացուցանել, որ մարդոց սրբազնագոյն իրաւունքը ազատութիւնն էր, թէ ճիշդ էր գլուխ ծռել աղաներուն, որոնք բռնապետութեան դաշնակիցներն էին, թէ տկլոր ժողովուրդը շտեմարանն էր գերագոյն զօրութեան, որ պիտի տապալէր բոլոր բռնութիւնները...

Չէի կրնար հաւատալ ականջներուս: Այս շուտու՞մը պէտք է անդրադարձած ըլլար երեսիս, քանի որ գիւղացիներէն մէկը, թեկէս քաշելով, կամաց ու վախկոտ, հարցուց.

- Վարժապետ, ի՛նչ կ'ասի...

Յայտնի էր, որ մարդերը ոչինչ կը հասկնային խօսւածէն: Բացի մուխթարէն, որ իր անունը թուղթի մը ներքեւ դնելու չափ կը ճանչնար հայերէնը, ու տղայէն, որուն հետ Պրոսա երկու տարուան, ազգային վարժարան մեր ուսանողութեան, սորված էինք հայերէնը, ոչ ոք կար այդ գեղին մէջ հայերէն հասկցող, հակառակ անոր, որ իրենց լեզուն թուրքերէնը չէր: Պրոսայի վարժարանին մէջ մեզի համար նոր բառ՝ այդ հայերէնը, քանի որ մեր տէյպայտունը գոյութիւն չունէր նման դաս մը: Մենք ունէինք